

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՇԲՐՈՆՁԵԴԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Դամբանային կառույցների հետազոտությունը թաղման ծեսերի ուսումնասիրության կարևորագույն խնդիրներից է: Դամբանային համալիրների կառուցման դիտարկումը ձևերի համակարգում, որպես ծիսակարգ, կարող է նախատել Հին Հասարակությունների սոցիալական կազմի, ընտանեկան հարաբերությունների, մշակույթի ծագումնաբանություն, մահվան և այնկողմնային աշխարհի մասին պատկերացումների առավել ամբողջական ընկալմանը: Հուղարկավորման ծեսով դամբարանի կառուցվածքի պայմանավորվածության հանդամանքը, որոշ դեպքերում, թույլ է տալիս ելրահանգումներ կատարել նաև էթնիկական փոփոխությունների վերաբերյալ:

Դամբարանների կառուցվածքում, առհասարակ, կարելի է առանձնացնել երկու բաղադրիչներ՝ արտաքին և ներքին կառույցները: Մեր դասակարգմամբ արտաքին կառույցներն են՝ դամբանաբլուրները (դամբանաթմբերը), արտաքին կամ եզրային կրոմլեխները, դրսից կրոմլեխին կցված բուրբակապատ շինությունները, հուշակոթողները: Ներքին կառույցներն են՝ դամբանասրահներն (գամբանախցերը)՝ իրենց ծածկերով, դրանց նախամուտքերը (գրոմոսները), եզրային կրոմլեխից ներս դանվող բուրբակապատ շինվածքները: Դամբարանները, սովորաբար, կառուցված են արտաքին և ներքին բաղադրիչների ասարբեր համադրություններով:

Ընդունված է ասարբերակել երկու ախյլի՝ շրջանաձև և ձվաձև հատակադժով դամբանաբլուրներ: Սրանցից յուրաքանչյուրն, իր հերթին, կարող է լինել սեղմենտաձև կամ հարթ գաղաթով: Կարելի է դամբանաթմբերը դասակարգել նաև ըստ լիցքի կազմության՝ հողաթումբ, քարակարկառ, քարահողային լիցքով դամբանաթումբ և այլն: Ըստ որում, ակներևաբար, ճիշտ կլինի ենթադրել, որ դամբանաթումբը պիտի կառուցված լինի ոչ միայն դամբանափոսից (եթե այդպիսին կա) հանված լիցքով, այլև՝ բերովի շինանյութերով (քար, ավազ, հող, կավ և այլն)<sup>1</sup>:

Դամբանաթմբային թաղումները բնորոշ են Հայաստանի միջինբրոնզեդարյան մշակույթներին՝ և հազվադեպ չեն նաև կուր-արաքսյան մշակույ-

1 К. Н. П и ц х е л а у р и. Восточная Грузия в конце бронзового века. — "Труды Кахетской археологической экспедиции", вып. III. Тбилиси, 1979, с. 23.

2 Б. А. К у ф т и н. Археологические раскопки в Триаleti, I. Тбилиси, 1941, с. 78-100; К. Х. К у ш н а р е в а. Севано-узлерикская культура периода средней бронзы на территории Южного Кавказа. — В кн.: "Культурное наследие Востока", Л., 1985, с. 102; А. Е. С и м о н я н. Культура эпохи средней бронзы северных районов Армянского нагорья. Автореф. канд. дисс., Л., 1984, с. 9.

թում<sup>3</sup>: Հին Հայաստանում թաղման կառույցի կայուն և ասարձված ձևերից է կրոմեխիտով շրջափակված, դամբանաթմբով ծածկված ստորգետնյա (քարարկղային, հիմնահողային), կիսադեանափոր կամ վերդետնյա քարարկղային սալածածկ դամբանասրահը՝ նախամուկով: Հիշյալ կառուցվածքն ունեցող դամբարաններից առավել տպավորիչ են Հճաչենի<sup>4</sup>, Վերին Նավերի<sup>5</sup>, Շամիրամի<sup>6</sup>, Թուեղբի<sup>7</sup>, Լուրի բերդի<sup>8</sup>, Խոջալի<sup>9</sup> դամբանաբլուրները:

Ուշ բրոնզի դարաշրջանի դամբանաբլուրները հիմնականում ունեն քարահողային լիցք, հստակ սյուրում են նաև ավազաքարի, միայն քարի կամ հողի լիցքով դամբանաբլուրներ: Որոշ դեպքերում դամբանախցերի ծածկասալերը լիցքով չեն ծածկվել (խոսքը, որպես կանոն, վերաբերում է փոքր դամբանաբլուրներին): Դամբանաբլրի հիմքի արամադիծը հրեմն հասնում է 35 մ (Վերին Նավեր, դ. 14)<sup>10</sup>, իսկ բարձրությունը՝ 3,3 մ (Խոջալի, 1 խումբ, դ. 14)<sup>11</sup>: Մեծ դամբանաբլուրների շարքում հանդիպում են բազմաշերտ կառուցվածք ունեցողները:

Այս տիպի հուշարձաններից, անշուշտ, հիշատակման են արժանի Շամիրամի մեծ դամբանաբլուրները (աղ. 1, 1): Շամիրամի №2 դամբանաբլուրը պատված է եղել կրկնակի զրահով. դամբանասրահի ծածկասալերը քողարկող ավազաթմբի վրա շարվել է ներքին քարե զրահը, այնուհետև լցվել է նոր ավազաթմբով, որի վրա շարվել է քարե արտաքին զրահը<sup>2</sup>: Մեկ դամբանաբլրի տակ սովորաբար գտնվում է մեկ դամբանասրահ, սակայն կան դեպքեր, երբ երկու (և ավելի) դամբանասրահների վրա բարձրանում է մեկ դամբանաբլուր (Քանադեղ, Գոգարան, Ծաղկահատիտ և այլն)<sup>13</sup>:

3 Б. А. К у ф т и н. Նշվ. աշխ., էջ 101–118: Գ. Ս. Թ ու մ ա ն յ ա ն. Ջրվեժի վաղբրոնզեդարյան №1 դամբանաբլուրի պեղումները. – Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորահառույցներում, 1. Երևան, 1992, էջ 11:

4 А. О. М н а ц а к а н я н. Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 г. (Предварительное сообщение). – “Советская археология” (далее – СА), 1957, № 2, с. 146 – 153; Ե ու յ ն ի՝ Լчашенские курганы (Раскопки 1956 года). – Краткие сообщения Института археологии – КСИА, вып. 85, М., 1961, с. 66 – 72.

5 Գ. Արեշյան, Հ. Սիմոնյան, Գ. Սարգսյան, Գ. Քոչարյան, Հ. Օհանյան. Հայագիտական կենտրոնի 1977–1978 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները. – «Բանբեր Երևանի համալսարանի», 1979, № 2, էջ 211–217:

6 Г. Е. А р е ш я н. Раскопки больших шамирамских курганов. – В.кн.: “Археологические открытия 1981 года”. М., 1983, с. 425 – 426.

7 Б. А. К у ф т и н. Նշվ. աշխ., էջ 79–83:

8 С. Г. Д е в е д ж я н. Лори - Берд, I. Ереван, 1981, с. 25 – 27.

9 К. Х. К у ш н а р е в а. Ходжалинский могильник. – “Историко-филологический журнал”, 1970, № 3, с. 109–117.


10 Գ. Արեշյան, Հ. Սիմոնյան, Գ. Սարգսյան, Գ. Քոչարյան, Հ. Օհանյան. Նշվ. աշխ., էջ 216–217:

11 К. Х. К у ш н а р е в а. Նշվ. աշխ., էջ 110:

12 Լ. Վ. Կիրակոսյան. Շամիրամի մեծ դամբանաբլուրների ճարտարապետությունը. – «Լրաբեր Հասարակական գիտությունների», 1988, №10, էջ 90:

13 Ա. Բաղրամյան. Գոգարանի II դամբանաբլուրը. – Հայ մոդերնական մշակույթի հետազոտման հարցեր: Երիտասարդ գիտնականների VIII կոնֆերանս. Ջեկուցումների թեզիսներ (այսուհետև՝ ԵԳԿ). Երևան, 1988, էջ 12: P. A v e t i s y a n. R. B a - d a l y a n. A. S m i t h. Preliminary report on the 1998 archaeological investigations of project ArAGATS in the Tsaghkahovit plain, Armenia. – “Studi Micenei ed Egeo-Anatolici”, XLII/1. Roma. 2000. p. 52–54.


Աղ. 1



Շամիրամի N 2  
մեծ դամբանաբլուր

0 4 մ


1



I I

II-II

Ա - վանակատ  
Բ - խեցախոնքեր



Շամիրամ 2 դամբարանադաշտ,  
դամբարան N 5

0 1 մ  
1 4 Կիրակոսյան

Դամբանասրահները սովորաբար տեղադրված են դամբանաբլուրների կենտրոնական հատվածում, սակայն որոշ դեպքերում դրանք տեղաշարժված են դեպի եզրագիծը: Լճաշենի №1 և №2 մեծ դամբանաբլուրների թաղման սրահները ստորգետնյա քարարկիներ են՝ 8,5x3,3x3,0 մ չափերով, իսկ Լոռի բերդի №7 դամբարանի թաղման սրահն ունի 8,0x2,5x2,6-2,8 մ չափեր<sup>14</sup>: Շամիրամի №1 մեծ դամբանաբլրի հիմքի տրամագիծը 23 մ է, բարձրությունը՝ 2 մ, թաղման սրահի (ստորգետնյա քարարկ) չափերը՝ 5,36x1,69x2,15 մ<sup>15</sup>: Դամբանասրահները, մեծամասամբ, հատակադեղմ ուղղանկյուն են (հիմնահողայինները՝ երբեմն կլորացույ անկյուններով) կամ երկրաչափական սեղանի (նավակաձև, մակույկաձև) տեսք ունեն, դրանց համար հատակ է ծառայում մայր հողը կամ բնական ամուր ասլարը: Անհրաժեշտության դեպքում դամբանախցի հատակը խորացվել է մայր հողի ամուր շերտի կամ ժայռի մեջ: Ասլարանի ջրամբարի ավի դամբարանադաշտի №7 դամբարանի հատակին արված են 4 փոսորակներ<sup>16</sup>, իսկ Լճաշենի դամբանադաշտի 2-րդ տեղամասի №47 կրոմլեխի դամբանախցի հատակը կավածեփ է<sup>17</sup>:

Քարարկային դամբանասրահների պատերը, որպես կանոն, շարվել են տուֆե և բազալտե մշակված կամ անմշակ, մինչև 3,5 տ կշռող քարերով, չոր շարվածքով, սակայն երբեմն պատերի շարվածքի ամրությունը համար կիրառվել է հողաշաղախ՝ ցեխ (Շամիրամ 2 դամբարանադաշտ, դ. №5, աղ. 1, 2): Պատերն, ընդհանուր առմամբ, կառուցվել են տափակ դրված քարերով, սակայն հանդիպում են նաև կողքի դրված և տափակ շարված քարերի համադրությամբ պատեր (Շամիրամի №2 մեծ դամբանաբլուր): Հնարավոր է, որ որոշ մեծ դամբանասրահների պատերը (Լճաշեն, Լոռի բերդ և այլն) պատասապատվել են գործվածքներով<sup>18</sup>: Մի շարք դամբանախցեր միջանկյալ դիրք են գրավում հիմնահողային և քարարկային տեսակների միջև (2 պատերը շարված են քարով, 2-ը՝ ոչ): Կան դեպքեր, երբ դամբանասրահի պատերը (կամ դրանցից մեկ-երկուսը) կառուցված են ուղղաձիգ (ցից) դրված քարերով: «Դոմենաձև» այդ դամբարաններին մենք կանդարդառանանք ստորև: Հիմնահողային դամբանասրահների պատերը, սովորաբար, ցած են իջնում որոշ թեքությունով:

Մեծ դամբանասրահներն ունեցել են դերանակալ տանիք և կեղծ թաղ կազմող ծածկ: Հիշյալ ձևով են ծածկված Լճաշենի №2, Լոռի բերդի №9, 52, Քեթիի №21, 24 (աղ. 11, 1, 3, 4) և այլ դամբարաններ: Կարմիր բերդի դամբարանադաշտում ուշբրոնզեդարյան դամբանասրահների ծածկասա-

14 С. Г. Деведжян. Նշվ. աշխ., էջ 26:

15 Լ. Վ. Կիրակոսյան. Նշվ. աշխ., էջ 89:

16 Յ. Մ. Մուրադյան. Պեղումներ Ապարանի ջրամբարի ավիին 1986թ. — Հայկական ՄՍՀ-ում 1985-1986թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան. Զեկուցումների թեզիսներ (այսուհետև՝ ԴՀԱԱ), 1987, էջ 20-21:

17 Վ. Ավետյան. Լճաշենի 1984-1985 թթ. պեղումները. — «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, №10, էջ 94:

18 Հ. Ա. Մարտիրոսյան. Հայաստանը զարգացած կամ ուշ բրոնզի դարաշրջանում. — Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, Երևան, 1971, էջ 226: С. Г. Деведжян. Նշվ. աշխ., էջ 34:

լերն օղակված են տուֆե ոչ մեծ քարերի պսակով, ծածկասակերի արանքները փակված են փոքր քարերով, իսկ Կեղարոտի №3 կրոմլեխի դամբանախուցը ծածկված է եղել կաղնու հասա տախտակներով<sup>19</sup>: Նախքան ծածկասակը տեղադրելը, ծածկի ամրության նպատակով, հիմնահողային դամբանասրահների պարագծով հաճախ քարեր են շարվել (աղ. 11, 2): Դամբանասրահների մուտքերը փակվել են միաշարք կամ բազմաշար սլասերով, ինչպես նաև սալաքարերով: Երբեմն մուտքը չի շարվել (հատկապես դրոմոսի բացակայության դեպքում), այլ պարզապես խորհրդանշվել է հողի կարվածքով: Հիմնահողային դամբանասրահների մուտքը, որը, որպես կանոն, դանվում է թաղման սրահի լայնակի կողմում, արտաքուստ չի աարբերվում հանդիպակաց կարճ կողմից և դրա մասին կարելի է դատել միայն ելնելով կողմնակի փաստերից (խցում ախող լրավիճակից, կմախքի տեղադրությունից, կրոմլեխի հատակագծից և այլն): Թաղման քարարկղային սրահներին հասկանչական է հետևյալ շինարարական հնարքը. նախ շարվել են դամբանասրահի երեք պատերը, տեղադրվել ծածկասակերը, կատարվել է թաղումը, այսպիսով միայն դրսի կողմից շարվել է մուտքը<sup>20</sup>: Մուտքն իր կառուցվածքով կից պատերի հետ կապակցված չլինելով, ներսի կողմից շարվածքի անհարթութայամբ, քարերի մեծությունը և այլ մանրամասներով սովորաբար տարբերվում է մնացած պատերից: Նման դամբարանների դոյությունը, որոնք հուղարկավորողների կողմից սկզբնապես հողով և քարով լցված չեն եղել, Հայաստանում վաղուց հաստատված է հնագիտական պեղումներով<sup>21</sup>:

Նախամուտքերը (դրոմոս) սովորաբար սկսվելով կրոմլեխից, թեքությունում իջնում են դեպի թաղման սրահի մուտքը (երբեմն դրանք թեքություն չունեն կամ փոքր-ինչ թեքված են դեպի վեր): Դրանց լայնությունը մոտավորապես հավասար է դամբանասրահների լայնությունը, չնայած հանդիպում են և շեղումներ հիշյալ օրինաչափությունից: Նախամուտքերի երկարությունը փոփոխվում է կախված դամբանարկի չափերից: Դրանք հատակագծում կանոնավոր կամ անկանոն ուղղանկյան տեսք ունեն, պատերը, հաճախ, շարվել են քարերով: Աշտարակի Խոջաբաղերի №1 դամբարանի դրոմոսի քարաշար պատի մեջ պեղումներով «գաղտնարան» է հայտնաբերվել<sup>22</sup>, իսկ Ապարանի ջրամբարի դամբարանադաշտի №2


19 А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 83, 92.

20 Խ. Ս ա մ ու ե լ յ ա ն. Հին Հայաստանի կուլտուրան. հ. 2. Երևան, 1941, էջ 33.

21 Ե. ր. Լ ա լ ա յ ա ն. Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում. Երևան, 1931, էջ 111: Կ. Ղ ա ֆ ա դ ա ը յ ա ն. Դամբարանների պեղումներ Կիրովականում.— ՍՍՌՄ ԳԱ Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», 1941, №3-4, էջ 57-61: Է. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Դամբարանի պեղումները Գոլովինո դյուղում.— Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի. հ. 5, Երևան, 1959, էջ 22-23 և այլն: Ուշրրոն-գեղարյան դամբարանների ծածկերի կառուցվածքի ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ հուղարկավորողները, մեծամասամբ, ջանացել են ննջեցյալի դին ( և ողջ գտմանասրահն ընդհանրապես) դերձ պահել թափվող հողից: Ըստ երևույթին, Հայկական լեռնաշխարհում դերիչխող պատկերացումներից մեկի համաձայն, դիակի վրա հող լցնելը նշանակում էր ննջեցյալին անդառնալի մահվան դատապարտել (հմտ. Ж. Д ю м е - з и л ь. Осетинский эпос и мифология. М., 1976, с. 116):

22 Գ. Ս. Թ ու մ ա ն յ ա ն. Աշտարակի Խոջաբաղերի ուշրրոնգեղարյան դամբարանները.— «Պատմա-բանասիրական հանդես», 1977, №2, էջ 253:

Աղ. II



կրոմլեխի տուֆի քարով շարված նախամուտքը ծածկվել է հորիզոնական զրված սալաքարերով<sup>23</sup>: Շամիրամ 2 դամբարանադաշտի №5 դամբարանը ունի օղակոց կրոմլեխին արևելյան կողմից հաված է եղել ուղղաձիգ կանցնիցված առձօն անմշակ սալերով կառուցված, ուղղանկյուն հատակագծով մի ցանկապատ: Ցանկապատված տարածքն, իր հերթին, ցից զրված սալերի երկու շարքով բաժանվել է արևելք-արևմուտք երկայնական առանցքներով երեք հատվածների, որոնցից կենտրոնականի արևմտյան մասում գտնվել է թաղման սրահի մուտքը, այսինքն կենտրոնական հատվածը նախամուտք է հանդիսացել: Եթե փոքր դամբարանների նախամուտքերը հաճախ ունեն գուտ խորհրդանշական իմաստ, ապա մեծ դամբարանաբլուրների յայն ու խոր դրոմոսները ծառայել են երևելի ննջեցյալների աճյունները տեղափոխող դիսասյերը և թաղման ճոխ գույքը դամբարանասրահներն իջեցնելուն: Դրոմոսը, հավանաբար, խորհրդանշում է ննջեցյալի անցնելիք ճանապարհը, այն մի վեկտոր է՝ ուղղված դեպի «կենտրոն» (նպատակակետ)<sup>24</sup>:

Ուշբրոնզեդարյան դամբարանների թաղման սրահները, նախամուտքերով հանդերձ, ունեն տարբեր ուղղվածություն: Օրինակ, Լճաչենի դամբարանադաշտերում գերիշխում է դամբարանասրահների հարավային, հարավարևմտյան և հարավարևելյան ուղղվածությունը, սակայն քիչ չեն նաև այլ ուղղվածության դամբարանասրահները: Լուռի բերդի դամբարանները հիմնականում ուղղված են հարավ-արևելք և հարավ-արևմուտք: Արթիկի կատակոմբների ուղղվածությունը, ըստ Տ. Խաչատրյանի, կամայական է<sup>25</sup>: Աշտարակի Լնոջաբազերի դամբարաններից չորսի թաղման խցերն ու նախամուտքերն ուղղված են դեպի հարավ (որոշ շեղումներով), դամբարանախցերից մեկն ուղղված է դեպի հյուսիս (վերջինս նախորդներից տարբերվում է նաև իր կառուցվածքով): Եվս մեկ դամբարան, որը համաժամանակյա չէ մյուսներին, ուղղված է դեպի արևմուտք: Վերոհիշյալ ուղղություններից առավելագույն շեղումը կազմում է 25<sup>0</sup>: Վերին Նավեր դամբարանադաշտի թև՝ միջին, թե՛ ուշբրոնզեդարյան դամբարանների թաղման սրահների ուղղվածության առավելագույն շեղումը հյուսիս-հարավ առանցքից մեծ չէ 31<sup>0</sup>-ից<sup>26</sup>: Դեպի հարավ է ուղղված (քիչ շեղումով) Օշականի դամբարանադաշտի №95 թաղման սրահը, իսկ ուշբրոնզեդարյան մյուս երեք թաղումների սրահներն ուղղված են դեպի արևմուտք (որոշ շեղումներով)<sup>27</sup>: Դեպի արևմուտք են ուղղված Շամիրամ 2 դամբարանա-

23 Ֆ. Մ. Մ ու ը ղ յ ա ն. նշվ.աշխ., էջ 21:

24 Е. А. С а в о с т и н а. Сакральное пространство и погребальный обряд боспорских гробниц. — В кн: "Исследования в области балто-славянской духовной культуры: погребальный обряд". М., 1990, с. 241.

25 Т. С. Х а ч а т р я н. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 137.

26 Հ. Ե. Ս ի մ ո ն յ ա ն. Նոր դիտողություններ բրոնզի և վաղ երկաթի դարի դամբարանների կողմնորոշման վերաբերյալ. — ԵԳԿ VII. Երևան, 1986, էջ 8:

27 С. А. Е с а я и, А. А. К а л а н т а р я н. Ошакан, I. Ереван, 1988, с. 90-93. Դամբարանասրահների և դրանց նախամուտքերի երկրի կողմերից որոշ շեղումներն անխուսափելիորեն առաջանալու էին որպես հետևանք հորիզոնում արևածագի դիրքի փոփոխության: Կարելի է ենթադրել, որ մեր նախնիները, Սթոունհենջի շինարարների նման, ուղղությունները հաշվարկել են այն կետից, որտեղ արևի սկավառակը ստորին մասով հավել է

դաշտի ուշբրոնզեդարյան դամբարանների թաղման սրահները, իսկ Շամիրամի մեծ դամբանաբլուրների դամբանասրահներն ուղղված են դեպի Հյուսիս և դեպի արևմուտք<sup>28</sup>:

Ուշբրոնզեդարյան դամբանաբլուրներն, ինչպես և նախորդ դարաշրջանի դամբարանները, օղակվել են քարե ծխական մեկ կամ մեկից ավելի շրջաններով կրոմլեխներով: Այն արպի դամբարանները, որոնք պահպանված են կրոմլեխով, սակայն չունեն դամբանաթուղ, հնագիտական պահպանության մեջ ընդունված է անվանել կրոմլեխներ: Դրանք, սովորաբար, հատակազօժում չըջանաձև են, ձվաձև կամ ուղիղ և հիշյալ ձևերի համադրություներն են կազմում: Սակայն հանդիպում են նաև այլ տիպի կրոմլեխներ: Այսպես, Մայրիսյանի ուշբրոնզեդարյան դամբանաբլուրներից մեկի մեծ գլաքարերով շարված կրոմլեխն ունի բազմանկյուն հատակադիմ<sup>29</sup>: Թոնեղքյան մշակույթի վաղ փուլին պատկանող Բեշաչենի №9 դամբանաբլրի թաղման հրապարակը եզրապատվել է քառանկյուն հատակադիմով շարված մեծ սալաքարերով<sup>30</sup>: Ուշ բրոնզի դարաշրջանի վաղ փուլին պատկանող Թրեյլի №37 դամբանաբլրի կրոմլեխը ևս ունի քառանկյուն հատակադիմ<sup>31</sup>:

Մեկ քարե շրջանի ներսում երբեմն անդադրված են մի քանի դամբանախցեր: Եզրային կրոմլեխները շարվել են հնարավորին չափ իրար մոտ դրված խոշոր գետաքարերով, տուֆե սալերով կամ բազալտե որձաքարերով, որոնք հաճախ, գործնական իմաստով, դամբանաբլուրների համար հենասպատերի դեր են կատարել: Ինչ չեն դեպքերը, երբ դամբանասրահների շուրջը շարվել է երկրորդ (փոքր) կրոմլեխը (աղ. III): Նման իրողություններ են վաստադրված Կարմիր բերդի, Սևանի ավազանի, Բեթլի, Սասունիկի, Թալինի և այլ դամբարանադաշտերում: Որոշ դեպքերում եզրային կրոմլեխները բազմաշար են և ունեն երկերես շարվածք, համեմատաբար մանր քարաբեկորների միջնալիցքով<sup>32</sup>: Միաշար կամ եռաշար աստիճանաձև կրոմլեխներով են եզրափակված Մաստարայի դամբարանադաշտի

հորիզոնի (տե՛ս Д ж. Х о к и н с, Д ж. У а й т. Разгадка тайны Стоупхенджа. М., 1973, с. 151):

28 Գ. Ա Ր Ե Ղ Յ Ա Ն, Ե. Ա Ս Ա Ր Յ Ա Ն. Հայագիտական կենտրոնի 1979–83 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները. — «Բանբեր Երևանի համալսարանի», 1985, №3, էջ 205: Լ. Վ. Կ Ր Ր Ա Կ Ո Ս Յ Ա Ն. Կ Ղ Վ. ա ղ խ., էջ 90, 91:

29 Գ. Ե. Ա Ր Ե Ս Յ Ա Ն. Маисяцские курганы. — В кн.: "Археологические открытия 1985 года". М., 1987, с. 558–559:


30 Ա. Գ. Զ Օ Ր Զ Կ Ա Տ Վ Ի Լ Ի, Է. Մ. Գ Օ Գ Ա Զ Ե. Памятники Триалети эпохи ранней и средней бронзы. — "Каталог триалетских материалов", 2. Тбилиси, 1974, с. 21–22.

31 Թբիլիսի. Археологические памятники, I, Тбилиси, 1978, с. 18. Ուղղանկյուն եզրապատով շրջափակված դամբարաններ են Հայտնի Արևմտյան եվրոպայում և Հնդկաստանում. տե՛ս В. И. М а р к о в и н. Дольмены Западного Кавказа. М., 1978, с. 223.

32 Լ. Վ. Կ Ր Ր Ա Կ Ո Ս Յ Ա Ն. Կ Ղ Վ. ա ղ խ., էջ 90–91, գծ. 2: Երբեմն կրոմլեխի քարերի տակ դրված են լինում վանակառի ցեղանի (Շամիրամ 2, դ. №4) կամ խեցանոթներ (Բորսունյու, դ. №3 և 5. տե՛ս Գ. Փ. Դ Ջ Ա Փ Ա Ր Օ Վ. Исследования в бассейне Инджичая. — В кн.: "Археологические открытия 1981 года". М., 1983, с. 421):



Աղ. III



Թախնի N 8 դամբարան  
Պեղումները Պ. Ավետիսյանի

ուշբրոնզեդարյան դամբարանները<sup>33</sup>: Վերին նավեր դամբարանադաշտի №37 դամբարանի շրջանաձև կրոմլեխի հյուսիսային հատվածի քարերը շարված են ուղիղ դժով, ասես հուշելով, որ այդ մասից սկսվում է թաղման սրահի նախամուտքը: Սովորաբար նախամուտքը փակող քարը կրոմլեխի ամենամեծ քարերից է լինում<sup>34</sup>:

Ուշբրոնզեդարյան որոշ դամբարանների կրոմլեխներին դրսից և ներսից կցված են քառանկյուն և կորագիծ հատակադժերով ոչ մեծ քարարկղներ: Քանադեղի դամբարանադաշտի №1 դամբանաթմբի կրոմլեխին արևմտյան կողմում կցված է ուղղաձիգ դրված սալերով շարված, ուղղանկյուն հատակադժով սալարկղ<sup>35</sup>: Աշտարակի Խոջաբաղերի №2 դամբարանի կրոմլեխի ներսում, դամբանասրահի արևմտյան կողմում կառուցված են անկանոն հատակադժով երկու փոքր սալածածկ քարարկղներ (աղ. IV): Համեմատաբար մեծ սալարկղների օրինակ են հանդիսացել, թերևս, Շամիրամ 2 դամբարանադաշտի №5 դամբանաբլրի նախամուտքին հյուսիսից և հարավից հսկող, ուղղանկյուն հատակադժով, ցից դրված քարերով շարված կառույցները: Նույն դամբարանադաշտում հայանի են կորագիծ հատակադժերով ներկրոմլեխային շինվածքներ (դ. №4): Վերին նավեր դամբարանադաշտի №37 դամբանաբլրի կրոմլեխից գետլի հյուսիս տեղադրված էր տուֆե մեծ սալաքար, որի տակից և շրջակայքից սկզբումներով հայտնաբերվել են կավանոթներ, բեկորներ, իսկ №19 դամբանաբլրի թաղման խցին կից, արևելյան կողմում, բազալտե քարերով շարված է խորհրդանշական զոհարան, որի քարերից մեկի վրա մարտի տեսաբան է պատկերված<sup>36</sup>: Խոջաբաղերի №3 դամբանաթմբի կրոմլեխի հարավային եզրագծին կից ժայռահարթակի վրա ևս դնվել են փշրված խեցանոթների բեկորներ: Ջրվեժի վաղբրոնզեդարյան №1 դամբանաթմբի արևմտյան կողմում մեծ քարերով շարված էր ուղղանկյուն հատակադժով «արկղ», որը, հնարավոր է, լինի ուշ շրջանի հսկելում, քանի որ վաղ երկաթի դարաշրջանում սույն դամբանաթմբում իջեցուկ թաղում է կատարվել: Շամիրամի դամբարանադաշտի վաղերկաթեդարյան կրոմլեխների հյուսիսային կողմին դրսից կցված են «քառանկյուն» քարարկղներ<sup>37</sup>:

33 Պ. Ս. Ա Վ Ե Ս Ի Ս Յ Ա Ն. Մաստարայի դամբարանադաշտի սկզբումները.— ԴՀԱԱ, 1989, էջ 28–29:

34 Թերևս ավելորդ չէ հիշատակել, որ Մեծամորի և Շամիրամի վաղերկաթեդարյան դամբարաններն օղակող կրոմլեխների տուֆ քարերի վրա արված են հարթաքանդակներ՝ ձիու, առյուծի, մարտականքերի, ռադմիկների, որսի տեսարաններով. տե՛ս Յ. Վ. Խ ա Ն - Յ ա Ճ յ Ո Ն, Գ. Խ. Տ ա Ր կ ի Տ յ Ո Ն, Ի. Մ. Դ Ե Յ կ Օ Ն Օ Վ. Вавилонская гиря XVI в. до н. э. с клинописной надписью из раскопок Мецамора.— "Древний Восток", 1983, № 4, с. 114. Գ. Ե. Ա Ր Ե Ղ Յ Ա Ն. Շամիրամի հուշարձանախմբի սիտեմատիկ սկզբումների տասնամյակը.— ԴՀԱԱ, 1985, էջ 14:

35 Գ. Ե. Ա Ր Ե Ղ Յ Ա Ն. Պահպանական սկզբումներ Քանադեղի դամբարանադաշտում.— ԴՀԱԱ, 1981, էջ 3: Քանադեղի դամբարանադաշտի մի քանի այլ դամբարաններ ևս ստոված են կրոմլեխի արևմտյան կողմում կցված ուղղանկյուն կամ կորագիծ հատակադժերով քարարկղներով:


36 А. Е. С и м о н я н. Раскопки могильника Верин-Навер.— В. кн.: "Археологические открытия 1980 года". М., 1981, с. 426.

37 Գ. Ա Ր Ե Ղ Յ Ա Ն, Հ. Ս Ի Մ Ո Ն Յ Ա Ն. ԵՊՂ-ի հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիայի 1975թ. կատարած հնագիտական աշխատանքները.— «Բանբեր Երևանի Համալսարանի», 1976, № 1, էջ 287:


Այ IV



I-I



II-II



Լ.Վ. ԿՐԱՎՈՅՍՏ

Աշտարակ, Խոջաբաղեր  
դամբարան N2

- 1. Խեցաոճեր
- 2. Ոսկորներ
- 3. Աստած
- 4. Վանակաւ

Հնագիտական պեղումներով հայտնաբերվել են փաստեր, որոնք թույլ են տալիս եզրակացնել, որ Հայաստանում, զարգացած բրոնզի դարաշրջանում գամբանաբլրի գագաթին երբեմն հուշակոթող է կանգնեցվել: Այսպես օրինակ, Քանազեզի №1 դամբանաթմբի գագաթին գտնվել է ներքևի մասում միացված, իսկ վերևում իրարից հեռացող երեք սալերով կառուցված պատվանգան, որն ըստ Գ. Արեշյանի, կարող էր ուղղաձիգ կանգնեցված փայտակերտ կոթողի բուն ծառայել: Գոգտրանի դամբարանադաշտի 2-րդ գամբանաբլրի դամբանասրահներից մեկի սալածակի վրա գտնվել է ֆալլատիպ կոթող<sup>38</sup>: Մեծամորում գտնված ավելի քան 1,5 մ բարձրությամբ տուֆակերտ մարդակերպ կուռքը (աղ. V, 1) հնագետները հակված են մահարձան համարելու<sup>39</sup>: Ենթադրվում է, որ Կարմիր բլուրից, Կարմիր բերդից, Այգեստանից, Շավարշավանից գտնված կուռքերը սկզբնապես դրված են եղել դամբարանների վրա<sup>40</sup>: Բանանց գյուղի մոտ է: Ռյոսլերի պեղած երկաթեդարյան մի շարք դամբարանների վրա (մեծամասամբ՝ արևելյան կողմում) կանգնեցված են եղել սրածայր, սեպածե մեծ քարեր (աղ. V, 2): №4 դամբարանի հարավարևմտյան կողմում տեղադրված է եղել 1,55մ բարձրությամբ քարակոթող, №13 գամբանաբլրի լիցքից դեպի վեր են բարձրացել երկու սրածայր քարակոթողներ: Դամբանաբլուրներից մեկի տակ պեղումներով հայտնաբերվել է 18 թաղում, որոնց մոտ հուշաքարերը տեղադրված են եղել արևմտյան կողմում, ըստ որում, 3 դամբարանների մոտ՝ մեկական, իսկ 5 դամբարանների մոտ՝ երկուական<sup>41</sup>: Մակոտկեն բազալտից կերտված կուռք է հայտնաբերվել Ապարանի ջրամբարի ափի №41 դամբարանից: Այն որպես շինաքար օգտագործվել է դամբանախցի պատի շարվածքում, գլխիվայր: Թաղման կառույցը թվագրվում է մ.թ.ա. XV–XIV դդ.<sup>42</sup>: Ուշբրոնզեդարյան հուշակոթողի նախատիպը կարող է լինել միջինբրոնզեդարյան մի շարք դամբանաթմբերի գագաթին տեղադրված բազալտե որձաքարը (Վերին Նավեր, Խոջաբաղեր 2, Շամիրամ 2. և այլ գամբարանադաշտեր)<sup>43</sup>, իսկ դրա հետագա զարգացումը՝ մի քանի մետր բարձրությամբ կոթող-մահարձանները (այդ թվում՝ մարգա-

38 Ա. Բ ա ղ ը ա մ յ ա ն. նշվ. աշխ.:

39 Է. Վ. Խ ա ն զ ա գ յ ա ն, Կ. Հ. Մ կ ը ա չ յ ա ն, Է. Ս. Պ ա ը ս ա մ յ ա ն. Մեծամոր. Երևան, 1973, էջ 138: Ս. Ա. Ե ս ա յ ա ն. Հայաստանի ուշբրոնզեդարյան քանդակագործությունը. «Լրաբեր Հասարակական գիտությունների», 1975, №12, էջ 45–46:



40 С. А. Е с а я н. Древняя культура племен северо-восточной Армении. Ереван, 1976, с. 230.

41 А. А. С п и ц ы н. Археологические исследования Э. А. Реслера в Елисаветпольской губернии в 1901 году. — "Известия Императорской археологической комиссии", вып. 12. СПб., 1904, с. 37–41.

42 Ֆ. Մ ու ը ա դ յ ա ն. Պեղումներ Ապարանի ջրամբարի ափին. — ԵԳԿ VIII, էջ 55–56:

43 Քարաշամբի միջինբրոնզեդարյան հանրահայտ դամբանաբլուրի գագաթին և սկզբնապես է եղել 0,35 մ բարձրությամբ և 0,21 մ տրամագծով ծակոտկեն բազալտե ֆալլադե կոթող (տե՛ս В. Э. О г а н е с я н. Раскопки Карашамбского могильника в 1987г. — "Археологические работы на новостройках Армении", I. Ереван, 1992, с. 27):

Աղ. V



2

կերպ և ֆալլաձև), որոնք լայն տարածում են ստանում Հայաստանի վաղ-երկաթեղարյան դամբարանադաշաբրոմ<sup>44</sup>:

Դոլմենները: Դամբարանային կառույցի յուրահատուկ տեսակ են կազմում դոլմենները՝ թաղման համար նախատեսված վերգետնյա շինությունները, որոնք կառուցված են ուղղաձիգ (ցից) կանգնեցված մեծ սալաքարերով, ունեն մուտք և տանիք<sup>45</sup>: Հայաստանում դոլմենների առկայությունն անդրադարձել են մի խումբ հեաաղոտողներ՝ Թ. Թորամանյանը, Ա. Քալանթարը, Եր. Լալայանը, Ս. Բարխուդարյանը, Հ. Մարտիրոսյանը, Տ. Խաչատրյանը, Ս. Եսայանը և այլք: Կարծիք է հայտնվել, որ դոլմենային թաղումները Հայաստանի համար բնորոշ չեն<sup>46</sup>: Թ. Թորամանյանը նշում է, որ Հայաստանի դոլմենները բավականին տարբերվում են այլ երկրների համանուն կառույցներից<sup>47</sup>: Հնագիտական դրականության մեջ հանդիպող սակավաթիվ տվյալներով դոլմենաձև դամբարաններ («դոլմեններ») են հայտնաբերվել Արագածոտնում (Աշտարակ, Շամիրամ), Տավուշում (Ղրղի, Չորաթան)<sup>48</sup>, Շիրակում (Հառիճ)<sup>49</sup>, Զանգեզուրում (Ախլաթյան)<sup>50</sup> և այլ վայրերում<sup>51</sup>, սակայն որևէ դոլմենի պեղումների վերաբերյալ հրասպարակված մանրամասն հաշվետվություն մեզ հայտնի չէ (բացառությամբ Հա-

44 Հ. Ա. Մ ա ղ ի ռ ո ս յ ա ն. Ուլթրոնգեղարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր. Երևան, 1969, էջ 23: Գ. Ա ռ ե շ յ ա ն, Հ. Ս ի մ ո ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 287: Ավելացնենք նաև, որ Կիլիկիա գետի ավազանի № 290 դոլմենի մոտ դրսևում մենհիրը Վ. Ի. Մարկովինը համարում է պատահական, ոչ հատկանշական երևույթ արևմտյան Կովկասի համար, ի տարբերություն Հնդկաստանի և Արևմտյան Եվրոպայի դոլմենային կառույցների, որոնց համար բնութագրական է մենհիրի առկայությունը (տե՛ս В. И. Марков и Н. Նշվ. աշխ., էջ 223): Միևնույն քաղաքակրթության բնութագրիչներից են քարակղային թաղումները, որոնց վրա կանգնեցված են քարե հուշակոթողներ պսոկադի և որսորդության տեսարաններով (տե՛ս История древнего Востока, ч. 2. М., 1988, с. 176, История древнего мира, кн. I. М., 1989, с. 32; Г. Ч а й л а д. У истоков европейской цивилизации. М., 1952, с. 113 և այլն):

45 Թ. Թ ո ռ ա մ ա ն յ ա ն. Նյութեր Հայկական ճարտարապետության պատմության. Երևան, 1942, էջ 3: Ս. Բ ա ռ խ ու դ ա ղ ա ղ յ ա ն. Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները. Երևան, 1935, էջ 32: В. И. Марков и Н. Նշվ. աշխ., էջ 238-284; Л. Н. С о л о в ь е в. Погребения дольменной культуры в Абхазии и прилегающей части Адлерского района. - "Труды Абхазского института языка, литературы и истории", вып. 31, Сухуми, 1960, с. 73.

46 Հ. Ա. Մ ա ղ ի ռ ո ս յ ա ն. Նշվ. աշխ., Թ. С. Х а ч а т р я н. Նշվ. աշխ., էջ 40.

47 Թ. Թ ո ռ ա մ ա ն յ ա ն. Նշվ. աշխ.:

48 Հ. Ա. Մ ա ղ ի ռ ո ս յ ա ն. Նշվ. աշխ.: Գ. Ա ռ ե շ յ ա ն, Հ. Ս ի մ ո ն յ ա ն, Գ. Ս ա ղ զ ս յ ա ն. Հայագիտական կենտրոնի 1976 թ. դաշտային հնագիտական աշխատանքները. - «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, №3, էջ 273: Շամիրամի «դոլմենի» (դ. № 36) կարճ պատերը շարված են տափակ գրված տուֆե սալերով:

49 Թ. С. Х а ч а т р я н. Նշվ. աշխ., էջ 36, 40, 43.

50 Ս. Ա. Ե ս ա յ ա ն. Զանգեզուրի վաղ հնագիտական հուշարձանները. - «Լրաբեր Հասարակական գիտությունների», 1972, №4, էջ 65:

51 Հետազոտողները դոլմեններ են հայտնաբերել նաև Սևանի ավազանում, մասնավորապես՝ Մոթթի ձորում (տե՛ս Ա. Բ ա ռ խ ու դ ա ղ ա ղ յ ա ն. Վեիբուխի երկիրը. - ՀՍՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատությունները. Հ. Լ. Երևան, 1935, էջ 163: Կ. Լ. Հ ո վ հ ա ն ի ս յ ա ն. Ուրարտական ճարտարապետությունը. - Ակնարկ Հայ ճարտարապետության պատմության. Երևան, 1964, էջ 24):

սրճի «դղմենի», այն էլ՝ վերապահումով)<sup>52</sup>: Այո նկատառումով, կարծում ենք, ավելորդ է քիչ ավելի հանդամանորեն անդրադառնալ Աշտարակի ինջարաղերի դամբարանադաշտի №5 դամբարանին (աղ. VI), որն իր կառուցվածքով ակնհայտորեն տարբերվում է նույն հնավայրի մյուս դամբարաններից: Թաղման խցի ծածկասալերը չծածկող քարե լիցքով դամբարան-թումբն օղակված է 6–7 մ տրամագծով, ուղղաձիգ կանգնեցված սալերով շարված կրոմլեխով, որի արևմտյան հատվածի քարերից մի քանիսն անտիղ (in situ) պահպանվել են: Դամբարանխցի արեելյան և հյուսիսային պատերին փոխարինում է բնական ժոյռը, արևմտյան պատը կազմված է երկու ուղղաձիգ կանգնեցված ժայռասալերից, որոնցից մեկը զրկված է մայր հողի վրա, մյուսը՝ երկչար որձաքարե հիմքի վրա: Հարավից մուտքը փակում է թեքված մեկ այլ սալաքար, որը, հավանաբար, սկզբնապես ուղղաձիգ դիրք է ունեցել: Համեմատության նպատակով ասենք, որ սույն դամբարանադաշտի համաժամանակյա մյուս դամբարանները շարված են տավակ դրված քարերով, նրանց մուտքերը հյուսիսային կողմում են և փակված են հորիզոնական դիրք ունեցող նեղ ու երկարուկ քարերով: №5 դամբարանի թաղման խցի համար հատակ է ծասայում մայր հողը, իսկ ծածկը կազմված է կողք-կողքի դրված երկու սալաքարերից: Դամբարան-խուցը հատակադժուժ մակույկաձև է, ավելի ճշգրիտ՝ կլորացող կողմերով երկրաչափական սեղանի տեսք ունի, դրա չափերն են՝ 2,10x1,17x1,15մ: Նախամուտքը, սկսվելով կրոմլեխի քարից, թեք հարթությամբ բարձրանում է դեպի զամբանախուցը (մյուս դամբարանների նախամուտքերը հյուսիսից են և, բացառությամբ №4 դամբարանի նախամուտքի, իջնում են դամբարանխցերի ուղղությամբ): Վերլուծելով հյուսիսարևմտյան կովկասի և այլ տարածաշրջանների դղմենների կառուցվածքը, նախկինում փորձել ենք հիմնավորել, որ մուտքի քարի վրա սողանցքի, կողային սալաքարերին՝ ակոսների, իսկ հիմքում՝ կրակաքարերի բացակայությամբ հանդերձ №5 դամբարանի թաղման խուցն իր կառուցվածքային առանձնահատկություններով չի հակասում «դղմեն» հասկացությունը<sup>53</sup>:

Դղմենի համադրությունը կրոմլեխով օղակված դամբարանի հետ նույնպես հազվագեղ է երևում չէ<sup>54</sup>: Այսպիսով, ինջարաղերի №5 դամբարանը, հավանաբար, կարելի է բաղադրյալ (կազմածո) դղմեն համարել:

Կատակոմբներ: Իրենց կառուցվածքով դամբարանների առանձին տեսակ են կազմում կատակոմբները: Ուշ բրոնզի դարաշրջանում դրանք ի հայտ են գալիս Շիրակում<sup>55</sup>: Արթիկի կատակոմբները տուֆի զանգվածի


52 Ձի բացառվում, որ հնագիտական գրականության մեջ, թյուրիմացարար, գղմեն են անվանվել մեծ քարերով շարված որոշ քարակղեր:

53 Գ. Ս. Թ ու լ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 250–252:

54 Ե. Դ. Փ ե լ լ ը յ ն. Западнo-кавказские дольмены. — "Материалы по археологии Кавказа", вып. 9. М., 1904, с. 15, 17; Ю. Н. В о р о н о в. Археологическая карта Абхазии. Сухуми, 1969, с. 19; В. И. М а р к о в и н. նշվ. աշխ., էջ 133, 222, 284:

55 Ե. Ս. Խ ա չ ա տրյան. Материальная культура древнего Артика. Ереван, 1963. ն ու յ ն ի՝ Древняя культура Ширака, с. 131–138; ն ու յ ն ի՝ Артикский некрополь: Каталог. Ереван, 1979. Լ. Ե. Խ ա չ ա տրյան. Катакомбы Арича. — "Научная сессия ГМИА и Музея "Эребуни"". Тезисы докладов. Ереван, 1981, с. 36–37.

Աղ. VI



Աշտարակ, խոջաբաղեր դամբարան N5

Լ.Ն.ԿՐԿՆԱՍՅԱՆ



մեջ փորված ձվաձև (հազվադեպ՝ ուղղանկյուն պրիզմայաձև) թաղման կառույցներ են, իրենց հետ մեկ ամբողջությու կազմող քառանկյուն կամ շրջանաձև հասակագծով հորանցքներով, որոնք փակված են, որպես կանոն, դամբանախցի քարազանգվածից դույնով և տեսակով տարբերվող քարե մեկ կամ երկու խցաններով, մանր քարերի շարվածքով կամ այս երկու ձևերի համադրությամբ (աղ. VII): Ցավոք, դամբանախցիների ուղղվածությունն օրինաչափությունները չեն բացահայտված: Թաղման խցի հատակի մակարդակը, մեծ մասամբ, ցածր է հորանցքի հատակի մակարդակից: Հիմնական խցերին կից երբեմն փորված են դաղտնարաններ: Արթիկի դամբարանադաշտում հայտնաբերված հուշարամբանները (կենոտաֆ), ի տարբերություն այլ դամբարանների, լրիվ լցված են հողով: Երկրորդ փուլին պատկանող բավականաչափ թվով դամբարաններ ազատ են քարահողային լիցքից: Մյուս դամբանախցիների ծավալի զգալի մասը լցված է հողով և տուֆի բեկորներով: Կմախք և դույթ չպարունակող այն դամբանախցերը, որոնց հորանցքերը փակված են խցաններով, լցված են հողով, իսկ քարերով շարված հորանցքերով խցերն ազատ են հողից<sup>56</sup>: Կատակոմբների արտաքին կառույցների մասին տեղեկություններ չկան: Արթիկի դամբարանադաշտում դրանք ծածկված են 1 մ և ավելի հաստությամբ հողաշերտով, որը հեռացնելուց հետո ուրվադժվում են հորանցքերը փակող տուֆե խցանները: Պատմական Շիրակի տարածքում կատակոմբներ են հայտնաբերվել նաև Հառիճում (ստորդետնյա քարարկղների տիպի), Սպանդարյանում, Երազգավորսում (Բաշ Շորադյալ)<sup>57</sup>, Ոսկեհասկում<sup>58</sup>: Ըստ երևույթին, տարբեր ժամանակաշրջաններով թվազրվող կատակոմբներ են հայտնաբերվել նաև Հայաստանի այլ դավառներում՝ Աղստեի դեպարտամենտում, Սյունիքում<sup>59</sup>: Այդ կատակոմբների մասին այլ տեղեկություններ մեզ հայտնի չեն: Որոշ հետազոտողներ դատում են, որ թաղման կառույցի հիշյալ տեսակը Հայաստանի նախորդ դարաշրջանների դամբարանների կառուցվածքի ներքին զարդացման արդյունք է և ունի տեղական ակունքներ<sup>60</sup>: Հ. Ա. Մարտիրոսյանի կարծիքով թաղման նմանատեսակ կառույցները Հայաստանի համար բնորոշ չեն<sup>61</sup>:

Ցավոք, սույն հոդվածի շրջանակներում մենք հնարավորություն չունենք մանրամասն խոսելու թաղման ծեսով դամբարանի կառուցվածքի սլալմանավորվածության մասին: Համառոտ անդրադառնանք միայն դամբարանի առանձին տարրերի կառուցման հերթականությանը, որի վերաբերյալ ուսումնասիրողները տարբեր տեսակետներ են արտահայտել: Ումանք գտնում են, որ նախ կառուցվել է դամբանասրահը, բարձրացվել

56 Т. С. Х а ч а т р я н. Древняя культура Ширака, с. 137–145.

57 Նույն տեղում, էջ 29, 135, 152; Н. Я. М а р р. Ани. Ереван, 1939, с. 30-31.


58 Л. А. П е т р о с я н. Раскопки памятников Кети и Воскеаса (III–I тыс. до н.э.). Ереван, 1989, с. 69–70.

59 Т. С. Х а ч а т р я н. Նշվ. աշխ., էջ 152:

60 Նույն տեղում, էջ 154–156; Л. А. П е т р о с я н. Նշվ. աշխ., էջ 71:

61 Հ. Ա. Մ а р тիրոսյանի տեսակետը:

Աղ. VII



դամբանաբլուրը և այնուհետև շարվել է կրոմլեխը<sup>62</sup>: Մեկ այլ վաղկածով սկզբում կառուցվել է դամբանասրահը, ապա՝ կրոմլեխը, հետո՝ դամբանաբլուրը<sup>63</sup>: Կարծիք է հայանվել նաև, որ սկզբում կառուցվել է կրոմլեխը, ապա՝ դամբանասրահը<sup>64</sup>: Մենք համամիա ենք վերջին տեսակետին: Ընդհանուր գծերով ներկայացնենք դամբարանի շինարարության հաջուրդականությունը մեր պատկերացմամբ: Նախ, բնականաբար, ընտրվել է ավյալ դամբարանադաշտի այն տարածքը, որանգ կառուցվելու էր դամբարանը: Ապա, հավանաբար, չորհրդով էլ կրոմլեխի եզրագիծը, մաքրագործվել է եզրագծված տարածքը, շարվել են կրոմլեխը և զրան կից կառույցները, կառուցվել և մաքրագործվել են դամբանասրահը և գրոմոսը: Ըստ որում, որպես կանոն, անդադրվել են ծածկասալերը, կասարվել է թաղումը, շարվել մուգը, հետո բարձրացվել է դամբանաբլուրը և տեղադրվել հուշակոթողը: Մեր խնդիրը էլ հոգվածի շրջանակներում հիմնավորել այս տեսակետը, միայն կամենում ենք ընդգծել, որ դուրս գործնական նկատառումներից ելնելով էլ կարելի է ենթադրել, որ դժվար պիտի լիներ դամբանասրահը կառուցելուց հետո շրջագծել կրոմլեխը: Ննջեցյալի ծխական մաքրությունն ապահովելու նպատակին էր ծառայում հենց դամբարանի բուն կառուցվածքը, որի յուրաքանչյուր տարրը պայմանավորված էր ծեսի պահանջներով<sup>65</sup>: Դամբարանը կառուցելու գործողությունն, ինքնին, խորհրդանշում էր տարածքի սրբագործումը: Դամբարանները կառուցողները ցուցաբերել են բացառիկ հնարամտություն և ներգրել են շինարարական արհեստի բնագավառում իրենց ծանրակշիռ գիտելիքների ողջ զինանոցը, հատկանիշներ, որ ի հայտ են գալիս առավելապես պաշտամունքային շինություններ կերտելիս: Գերեզմանների պաշտամունքի իրողությունը մեզանում հաստատվում է ազգագրական և բանահյուսական բազմաթիվ ավյալներով<sup>66</sup>:

62 Ս. Բ ա թ ի ու ղ ա թ յ ա ն. Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, էջ 30–31: Г. Е. А р е ш я н. Материалы из раскопок Кармирбердского (Тазакендского) могильника в музее Грузии. — «Вестник Ереванского университета (общест. науки)», 1970, № 1, с. 240.

63 Գ. Ե. Ա թ ե շ յ ա ն. Նշվ. աշխ., էջ 3:

64 И. М. Д ж а ф а р з а д е. Хачбулагская археологическая экспедиция 1960 года. — «Материальная культура Азербайджана», т. 8, Баку, 1976, с. 23.

65 В. И. М а р к о в и н. Նշվ. աշխ., էջ 210:

66 Ս տ. Լ ի ս ի ց յ ա ն. Զանգեզուրի հայերը. Երևան, 1969, էջ 293: Գ. Դ. Ա ս ա տ թ յ ա ն. Պատմական Քանաքեռը և քանաքեռցիները. Երևան, 1990, էջ 84: Պ ա ո շ յ ա ն. Սոս և վարդիթեր.— Երկերի ժողովածու երեք հատորով. Հ. 1, Երևան, 1974, ԼԱ: Սասունցի Դավիթ. Հայկական ժողովրդական էպոս. Երևան, 1961, էջ 161, 315 և այլն:

СТРУКТУРА ПОЗДНЕБРОНЗОВЫХ ПОГРЕБАЛЬНЫХ СООРУЖЕНИЙ  
АРМЕНИИ

ГАРЕГИН ТУМАНЯН

## Р е з ю м е

Изучение погребальных сооружений — одна из важнейших задач исследования погребальных обрядов. Сооружение погребальных комплексов рассматривается как один из компонентов обряда, так как устройство гробниц обусловлено требованиями погребального обряда. В структуре погребальных сооружений выделяются две основные составные части — наружные и внутренние. По нашей классификации наружными частями являются насыпи курганов (могильных холмов), внешние кромлехи, все строения, примыкающие к кромлехам снаружи, и надгробные стелы, а внутренними частями — погребальные камеры с перекрытиями, дромосы, все дополнительные постройки, находившиеся внутри внешних кромлехов (под насыпью курганов). На основе анализа отдельных компонентов и обобщения полученных результатов выводится основной тип погребальных сооружений Армении в эпоху поздней бронзы — обнесенная кромлехом подкурганная погребальная камера (грунтовая или склеп) с дромосом. Обсуждается вопрос очередности устройства отдельных элементов могильных сооружений. Рассматриваются также другие типы древних усыпальниц, сравнительно мало распространенных на территории Армянского нагорья — дольмены и катакомбы.

## THE STRUCTURE OF THE LATE BRONZE AGE TOMBS IN ARMENIA

GAREGIN TUMANYAN

## S u m m a r y

The research of the burial constructions is one of the important investigation problems of the funereal rites. The erection of mortuary complexes is observed as a component of the rite, because the construction of tombs was due to demands of the funereal rites. Two essential components — exterior and interior, are detached in the structure of burial constructions. According to our classification the exterior parts consist of the burial mounds, exterior cromlekhs, all the constructions, which are appended to cromlekhs from exterior sides and the memorial stelas. The internal parts of tombs consist of mortuary chambers (with their capstones), dromoses and all the additional edifices situated into the exterior cromlekhs. On the basis of the analysis of each construction components and generalizing the obtained results the primary type of the burial constructions of the Late Bronze period is arisen — the underground mortuary chamber with a dromos, surrounded by a cromlekh. The author has examined the problems of erectional sequence of different components of mortuary buildings and other types of ancient graves — dolmens and catacombs, comparatively less prevailing in the Armenian highland.